ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1998 թվականի հոկտեմբերի 19-ի ՀՕ-27 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված գործունեության տեսակների մասով, բացառությամբ «ժգ», «ժդ», «ժդ[1]», «ժէ», «ժը» կետերով նախատեսված գործունեության տեսակների, հաստատագրված վճարի չափը հաշվարկելիս (բացառությամբ Ստեփանակերտ քաղաքի) լրացուցիչ կիրառվում է 0,5 գործակից:»:

Հոդված 2. Օրենքի 96-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությունում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության հարկային մարմինը» բառերով:

Հոդված 3. Օրենքի 101-րդ հոդվածում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչությունը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության հարկային մարմինը» բառերով:

Հոդված 4. Օրենքի տեքստում, բացառությամբ Օրենքի 77-րդ, 81[1]-ին և 86[1]-ին հոդվածների, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 5.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանված գործակիցը կիրառվում է 2018 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսների համար հաստատագրված վճարի չափը հաշվարկելիս:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**